



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2015

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՍՈՍ 27

ԱՂՈԹՔ ԵՒ ՕՐՀՆԵՐՔ ԱՍՏՈՒԾՈՅ

**Տ**էրն է լոյսա եւ փրկութիւնս, որմէ՛ պիտի վախնամ ես.  
Տէրն է կեանքիս ապաւենը, որմէ՛ պիտի դողամ ես:  
Մէկ բան խնդրեցի Տիրոջմէ, եւ սա է աղաչանքս.  
Կեանքիս բոլոր օրերուն Տիրոջ փան մէջ բնակիլ,  
ընբռշխնել Տիրոջ վայելչութիւնը,  
եւ զինք պաշտել իր փաճարին մէջ:  
Նեղութեան ժամանակ իր յարկին փակ պիտի պահէ զիս,  
իր փաճարը զիս պիտի պապապարէ,  
ամուր ժայռի վրայ պիտի կանգնէ զիս:  
Եւ հիմա գլուխս բարձր պիտի կանգնիմ  
զիս շրջապարող թշնամիներուս դէմ,  
եւ ուրախ դադակով զոհեր պիտի մատուցանեմ Տիրոջ փաճարին մէջ,  
պիտի երգեմ ու նուագեմ իրեն համար:  
Յոյսդ Տիրոջ վրայ դիր, զօրացիր եւ քաջ եղիր. յոյսդ Տիրոջ վրայ դիր:

## ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխահիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

## ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ԵԼԻՅ ԼԶ - Խ (36-40) ԳԼՈՒԽՆԵՐ



## ԳՈՐԾԻՆ ԼՐԱՅՈՒՄԸ (39:32-43)

Նախորդող գլուխներուն մէջ փեսանք Աստուծոյ կողմէ պատուիրուած Վկայութեան Խորանին ու անոր սպասներուն վերաբերող հրահանգներ “պիտի շինես” թելադրանքով, իսկ հիմա արդէն 36-39 գլուխները մեզի կը ներկայացնեն Աստուծոյ կողմէ պատուիրուած Տիրոջ ներկայութեան Վրանին, Ուխտի Տապանակին, Հացի Սեղանին, Աշտանակին, Խունկ Ծխելու Սեղանին, Օծման Խողին, Զոհի Սեղանին, Պղինձէ Սեղանին, Տիրոջ ներկայութեան Վրանին Վարագոյրին, գործածուած մեքաղներուն, քահանաներուն զգեստներուն, լանջապանակին, եւ այլ սպասներուն շինութիւնը ըստ Տիրոջ պատուիրածին: Այս բոլորը շինուին ըստ ներկայացուածին, ու մանաւանդ զայն շինողները ըլլան անոնք, որոնք սրբով իմաստուններն են, որոնց Տէրը իմաստութիւն ու հանճար փութաբարանին պաշտամունքին գործերը ընելու եղանակը գիտնալու համար:

Քանի մը առիթներով կը յիշուի այս փութալը՝ «սրբով իմաստուն, որոնց սիրտը կը փափաքի գործի մօտենալ»: Հեքաբքքրական է այն երեւոյթը, որ այսքան մանրամասնութեամբ նշուած է այս գլուխներուն մէջ, թէ ինչպիսի չափերով, գոյներով ու փեսակներով այս բոլորը պէտք է շինել: Այս բոլորի մէջ կարելի է փեսնել կարգ ու կանոնը, բծախնդրութիւնը, ներդաշնակութիւնը, որպէս մանրակերպը Վերին Սրբարանին, որ ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ ներկայութիւնը: Բայց այսքան բծախնդրութիւն ու մանրամասնութիւն անոր համար, որպէսզի Աստուծոյ ժողովուրդը ըստ այնմ, ինք եւս բծախնդրութեամբ մօտենայ ու նկատի ունենայ Աստուծոյ պատուէրները: Որովհետեւ յաճախ իբրեւ մարդ կրնանք թերեւակի առնել կարգ մը բաներ, որոնք սակայն անհրաժեշտ ու կարելոր են, երբ մանաւանդ հարցը կը վերաբերի մեր հոգեւոր կեանքին: Հետեւաբար Աստուծոյ կողմէ փութուած այս թելադրութիւնները իրենց բծախնդրութեամբ որպէսզի մարդը պատրաստուի նոյն ձեւով բծախնդիր ըլլալու իր հոգեւոր կեանքին:

Նիւթականացած այս պատուէրներուն մէջ կարելի է փեսնել խորհրդանշական փութալներ, ինչ որ եկեղեցական հայրերը փորձած են փեսնել, մանաւանդ թիւերու հետ կապուած: Օրինակ, «յիսուն օղակներ, եւ այս օղակներով դէմ դիմաց վարագոյրները իրարու կոճկելով»: Յիսուն թիւը կը յիշեցնէ Սուրբ Հոգւոյ գալուստը վերնափայլ մէջ, Քրիստոսի յարութենէն յետոյ: Իսկ դէմ դիմաց վարագոյրները՝ հրեաներն ու հեթանոսները, որոնք իրարու կը կոճկուին դառնալու համար միակտուր, որ կը ներկայացնէ թէ ինչպէս Քրիստոսի եկեղեցին Սուրբ Հոգիի ներգործութեամբ հրեայ թէ հեթանոս կու գան կազմելու այդ խորհրդաւոր մարմինը՝ եկեղեցին:

Ոսկիէ շինելը, կը խորհրդանշէ պատուական ու թանկագին մեքաղի փեսակը, որ դարձեալ Աստուծոյ նուիրուածը պատուական ու թանկագին ըլլալու է, երբ մանաւանդ այդ շինուածը կը խորհրդանշէ Աստուծոյ ներկայութիւնը Ուխտի Տապանակը: Իսկ պղինձէ շինելու նպատակը, անոր մէջ ալ դաբասափայլի խորհուրդը, այս պարագային գոհի սեղանը: Հեքաբքքրական մէկ այլ ուրիշ երեւոյթ, ամէն մէկ սեղան կամ Ուխտի Տապանակը ունին չորս օղակներ ձողերու համար, որպէսզի անով շալկեն փոխադրելու համար: Փոխադրելու համար, որովհետեւ մնայուն չէ իրենց կայքը, այլ միշտ չուելու ընթացքի մէջ, անոր համար ալ Եբրայեցոց նամակին հեղինակը պիտի ըսէ մնայուն պանդուխտներ ենք այս երկրի վրայ (Եբր 11): Ամէն անգամ երբ Տէրը կը պատուիրէ որ պէտք է չուն, ուրեմն իրենց հետ պիտի փանին նաեւ Վկայութեան Խորանը իր առարկաներով, որովհետեւ Աստուծոյ ներկայութիւնն է: Ուրեմն ուր որ երթան Աստուծոյ ներկայութիւնը պէտք է որ իրենց հետ ըլլայ:

Հեքաբքքրական է երբ կը կարդանք այն հատուածը (38:21-31) ուր կը ներկայացնէ թէ որքան ոսկի կամ արծաթ գործածուեցան այս բոլորը շինելու համար: Ուրկէ՞ այս բոլորը: Չմոռնանք այն պահը, երբ Իսրայելի ժողովուրդը դուրս պիտի գար Եգիպտոսէն «Եգիպտացիներէն արծաթեղէն զարդեր եւ ոսկեղէն զարդեր ու հանդերձներ խնդրեցին: Տէրը ժողովուրդին շնորհք փութալ Եգիպտացիներուն առջեւ, այնպէս որ Եգիպտացիները անոնց խնդրածը փութին» (12:35-36): Այս բոլորը իբրեւ հարուցում անոնց կրած նեղութիւններուն, միւս կողմէ շնորհակալութիւն վերադարձնելով զանոնք Աստուծոյ Վկայութեան Խորանին շինութեան:

Այս բոլորը շինուեցան ըստ Տիրոջ պատուիրածին, բայց աւարտին օրհնութիւն է պէտք, եւ ահա Մովսէս օրհնեց զանոնք: Կը նշանակէ այդ բոլորը նուիրագործուեցան, որպէսզի յարկացուին Աստուծոյ, ու փոխադարձ անկէ եկած օրհնութիւնն ալ փոխանցուի ժողովուրդին:

### **ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՎՐԱՆԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՒ ՆՈՒԻՐՈՒՄԸ (40:1-38)**

Աստուած կը պատուիրէ, որ Մովսէս կանգնեցնէ Խորանը, այսինքն Վկայութեան Վրանը «Երկրորդ քարուան առաջին ամսուան առաջին օրը»: Առաջինը ամիսը Նիսան Ապիպ ամիսն է, այսինքն այն ամիսը, որ իրենք դուրս եկան Եգիպտոսէն: Այդ ամիսը նաեւ իրենց համար ամիսներու առաջինը եղաւ, ուրեմն քարին այդ ամիսով կը սկսին, որպէս նոր սկզբնաւորութիւն, նոր էջ մը իրենց կեանքին: Ահա Մովսէս գործնական քայլերու կ'անցնի այդ բոլորը շինուածները իրենց տեղերը դնելու, ու մանաւանդ այդ բոլորը օձման իւղով օծելու ու սրբելու որպէսզի սուրբ ըլլան: Այս բոլորը Մովսէս կարարեց ինչպէս Տէրը պատուիրած էր:

Այս բոլորէն յետոյ «Ամպ մը ծածկեց Վկայութեան վրանը եւ Տիրոջ փառքը լեցուց խորանը: Մովսէս չէր կրնար մտնել, որովհետեւ Տիրոջ փառքը լեցուցեր էր խորանը»: Այս արտայայտութիւնը ցոյց կու տայ թէ Աստուած Իր ներկայութեամբ, որպէս ամպի խորհուրդով, կու գայ Իր կնիքը դնելու, Իր հովանաւորութիւնը, իր պաշտպանութիւնը, Իր օրհնութիւնը, եւ անով առաջնորդելու ժողովուրդը դէպի խոստացուած երկիր:

Ամէն անգամ որ այդ ամպը կար ժողովուրդը կը մնար, ամէն անգամ երբ այդ ամպը վերնար, ժողովուրդը կը չուէր: Իսկ գիշերը խորանին վրայ կրակ կար, իրենց բոլոր ճամբորդութիւններուն մէջ: